



« 24 » նոյեմբերի 2009թ.

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 254

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ  
ՕԳՈՍՏՈՍԻ 18-Ի N 122 ՀՐԱՄԱՆԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N 1294-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 12-րդ կետի «դ» ենթակետով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 24-ի N 309 որոշման 1-ին կետով հաստատված կարգի 6-րդ կետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2009 թվականի օգոստոսի 18-ի «Բնակարանային ապահովման ծրագրի շրջանակներում բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով աջակցություն ստացող անձանց ցուցակը հաստատելու մասին» N 122 հրամանում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) հրամանի հավելվածով հաստատված՝ Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեով ՀՀ քաղաքաշինության նախարարությանը հատկացված միջոցների հաշվին ՀՀ Շիրակի մարզի Ախուրիկ համայնքում երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած, 2008 թվականի դեկտեմբերի 15-ի դրությամբ հաշվառված, բնակարանների գնման վկայագրերի տրամադրման միջոցով աջակցություն ստացող անձանց ցուցակի 2-րդ տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

2	Դարբինյան Ռուզան Մովսեսի	AE 0295088	2	2	4908.8
---	--------------------------	------------	---	---	--------

2. Սույն հրամանի 1-ին կետով տրամադրվող բնակարանի գնման վկայագրի գործողության ժամկետը երկարաձգել 1 ամսով:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունն իրականացնում են անձամբ:

Նախարար՝

Վ.Վարդանյան